ԻԻՀ 11-ՐԴ ԳՈՒՄԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ, ՀԱՐԱՎԱՅԻՆ ԻՐԱՆԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ ՌՈԲԵՐՏ ԲԵԳԼԱՐՅԱՆ

Հարգարժա՛ն ներկաներ, ուրախ եմ այս գիտաժողովին ներկա լինելու համար և ողջունում եմ կազմակերպիչներին: Օգտվելով առիթից շնորհավորում եմ Իրանի ժողովրդին հեղափոխության տարեդարձի կապակցությամբ:

Հարգելինե՛ր, այսօր էլ երկու երկրների հարաբերությունների մասին, ի մասնավորի, բարձր մակարդակ ունեցող հարաբերությունների մասին և մենք այժմ, որպես խորհրդարանի անդամներ, և երկկողմ հարաբերություններով հետաքրքրված և ուղղակիորեն դրանք զննող անձինք ակնկալում ենք, որ պահն է անցնել բարիդրացիական մակարդակից և ամրագրել դրանք ոչ միայն մշակութագիտական, այլ ավելի հստակ տնտեսական և տնտեսաանվտանգային ձևերով և մեխանիզմներով:

Այս երկկողմ հարաբերությունների զարգազմանը պիտի խթանի և ամրագրի տնտեսաանվտանգային հարաբերությունները: 44-օրյա պատերազմից առաջացած աշխարհաքաղաքական փոփոխությունները և այն հարափոփոխ իրավիճակը, որ տարածաշրջանն է ապրում և այն շաղկապվածությունը, որին ականատես ենք լինում Միջին Արևելքում և Կովկասում հաստատում են վերոնշյալ միտքը: Իրոք, պետք է նոր թափ ստանան տնտեսական, անվտանգային հարաբերությունները: Հետևաբար, պետք է հստակեցվեն փոխշահավետ տիրույթները, հատկապես լիազորված անձանց կողմից:

Մենք ողջունում ենք այս գիտաժողովը և հույս ունենք, որ ականատեսը կլինենք երկու երկրների հարաբերությունների վերելքին: